ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀԱԴԻՄԱԿԸ

Ծագումով հայ և հին ալեքսանդրոպոլցի հայտնի քանդակագործ Մերկուլովը, 1907 թվականի հոկտեմբերի 29-ին, Խրիմյան Հայրիկի մահվան օրը, գիպսից պատրաստում է նորոգ հանգուցյալ Հայրապետի մահադիմակը։

Հարգելի քանդակագործը երկար տարիներ գուրգուրանքով իր մոտ պահում է այդ թանկագին մասունքը և միայն իր կյանքի վերջին օրերին կտակում է, որ իր մահից հետո Խրիմյան Հայրիկի գիպսից պատրաստված այս մահադիմակը հանձնվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Մի քանի ամիս առաջ, քանդակագործ Մերկուլովի դուստրը, մասնավոր առաքելությամբ, Լենինգրադից գալիս է Մայր Աթոռ և անձամբ Վեհափառ Հայրապետին հանձնում այս թանկագին նվերը։

ԻՐԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԾ ԳՈՐԳԵՐԸ (նույնից 2 հատ) ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ